4. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
(*Մ.Օսիկյան*)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

5. Չկայացած չափաբաժիններն հաստատելու մասին
(*Մ.Օսիկյան*)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ 9-րդ,10-րդ և 16-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հայտեր չեն ներկայացվել:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ 6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

6.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(*Մ.Օսիկյան*)

ԿԱՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ գնահատման արդյունքների ամփոփման օրը <<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենքում՝ հասցե ք. Երևան, Հ.Ներսիսյան 7, 2-րդ հարկ տնօրենի ընդունարան:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Օսիկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Խեղոյան,
Ռ.Բաբաջանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան: